ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐՏԱՅԱՅՏՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ըստ Գ. Ջահուկեանի, Ֆ. Խլղաթեանի՝ արտայայտչականութիւնը ոճի այն յատկութիւնն է, որ ազդում է ունկնդրի կամ ընթերցողի զգացմունքների ու տրամադրութեան վրայ, թոյլ չի տալիս նրան անտարբեր լինել խօսողի եւ խօսքի նկատմամբ[1]։ Հայ ոճագիտական մտքի պատմութեան մէջ անդրադարձ է կատարուել արտայայտչական հետեւեալ միջոցներին՝ ճարտասանական դարձոյթներ, կրկնութիւններ, աստիճանաւորում, շրջադասութիւն, խօսքի զեղչում, հակադրութիւն եւ այլն։ Ըստ մեր ձեռքի տակ եղած տեսական աղբիւրների՝ ներկայացնենք լեզուաբանների դիտարկումները արտայայտչական վերոնշեալ միջոցներից մի քանիսի վերաբերեալ։

Ճարտասանական դարձոյթներ: *Ճարտասանական դարձոյթներն են ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչութիւնը, ճարտասանական դիմումը։ Այս միջոցների ոճական արժէքը առաջիններից մէկը ներկայացրել է Գ. Վահանեանը։ Նա գրում է. «Ուժեղ զգացմունքները յաճախ արտայայտւում են լեզուական յատուկ միջոցներով, որոնք ճշտութեամբ են դրսեւորում զգացմունքը, աւելի ուժեղ եւ ազդեցիկ են դարձնում խօսքը։ (....) Խօսքը բազմազան եւ հետաքրքիր դարձնելու համար խօսողը կամ գրողը օգտագործում է մտքի, զգացմունքի արտայայտման ճարտասանական ձեւերը»[2]։ Լեզուաբանը բնութագրում է ճարտասանական հարցը եւ ճարտասանական բացականչութիւնը, նշում, որ յաճախ հեղինակը հարց է տալիս եւ իսկոյն պատասխանում, չհասկանալով ճարտասանական հարցի էութիւնը, իր միտքը, զգացմունքը արտայայտում է բացականչութեամբ՝ դիմելով այս կամ այն առարկային։ Գ. Վահանեանի դիտարկմամբ, ճարտասանական դարձոյթները յաջող կիրառել է Թումանեանը։ «Թումանեանի վարպետութիւնը, նրա ոճի առանձնայատուկ կողմն այն է, որ ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչութիւնը, խօսքի դինամիզմը ապահովող բայերի, ստորոգեալների առատութիւնը, կարճ, դիպուկ նախադասութիւնները, բառերի իմաստային ծանրաբեռնուածութիւնը եւ վերջապէս յուզականութիւնը ուժեղացնող կրկնութիւնները միաձուլուելով մի ամբողջութեան մէջ, իրար լրացնելով ստեղծում են յուզիչ խօսք, սրտառուչ պատկեր»[3]։*

Գ. Ջահուկեանը, Ֆ. Խլղաթեանը հիմնաւոր անդրադարձել են յատկապէս ճարտասանական հարցին։ Նրանք ճարատասանական հարցը սահմանում են հետեւեալ կերպ. «Ճարտասանական հարց է կոչւում հարցական նախադասութեան օգտագործումը ոչ թէ պատասխան ստանալու, այլ միտքն ուժեղացնելու, խօսքին անմիջականութիւն եւ արտայայտչականութիւն հաղորդելու համար»[4]։ Ըստ նրանց՝ ճարտասանական հարցը խօսքին արտայայտչականութիւն է հաղորդում՝ մենախօսութեանը տալով երկխօսութեան ձեւ։ Ճարտասանական հարցը, ըստ էութեան, պարունակում է իր պատաս-

---

[1] **Գ. Ջահուկեան**, **Ֆ. Խլղաթեան**, Հայոց լեզու։ Ընդհանուր գիտելիքներ։ Ոճաբանութիւն, Երեւան, 1976, էջ 57։

[2] **Գ. Վահանեան**, Հայոց լեզուի ոճաբանութեան ձեռնարկ, Երեւան, 1956, էջ 97-99։

[3] Նոյն տեղում, էջ 98-99։

[4] **Գ. Ջահուկեան**, **Ֆ. Խլղաթեան**, Հայոց լեզու։ Ընդհանուր գիտելիքներ։ Ոճաբանութիւն, Երեւան, 1976, էջ 75։

խանը։ Ֆ. Խլղաթեանը յաւելում է, որ ճարտասանական հարցը խօսքին հաղորդում է յուզարտայայտչական երանգ, ուժեղացնում է խօսքի թափը եւ առանձնապէս շատ է հանդիպում մենախօսութիւններում, չափածոյ եւ դրամատիկական ստեղծագործութիւններում[5]։

Ոճագէտ Պ. Պօղոսեանը ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչութիւնը, ճարտասանական դիմումը ներկայացնում է որպէս նախադասութիւնների ձեւեր։ «Բոլոր այս ձեւերի համար ընդհանուրն այն է, որ յոյզի, զգացման յարուցումը կապուած է ոչ թէ բառի կամ կապակցութեան իւրայատուկ գործածութեան, այլ ամբողջ նախադասութեան կառուցուածքի, աւելի ճիշտ՝ մտքի արտայայտման յատուկ եղանակի հետ»[6]։ Որպէս նորութիւն՝ լեզուաբանը քննել է այս միջոցները կառուցուածքային տեսակէտից։ Այսպէս՝ ճարտասանական հարցը կառուցուածքային տեսակէտից ունի մի առանձնայատկութիւն. հաստատական նախադասութիւններով արտայայտւում է մտքի ժխտում, իսկ ժխտական նախադասութիւններով՝ հաստատում[7]։ Հեղինակը բերում է բնութագրական օրինակներ ճարտասանական բոլոր դարձոյթներով։

Ճարտասանական դարձոյթների վերաբերեալ կարեւոր դիտարկումներ ունի Ա. Մարութեանը։ Ըստ նրա՝ սրանք ծառայում են խօսքի արտայայտչականութիւնն ուժեղացնելու նպատակին։ Լեզուաբանը նշում է, որ «կարեւորն այն չէ, թէ ճարտասանական հարցական նախադասութիւնների միջոցով ի՞նչ դատողութիւններ են արտայայտւում, այլ այն, թէ դրանք յուզական ի՞նչ բեռնուածութիւն եւ ոճական ի՞նչ արժէք ունեն գեղարուեստական խօսքի մէջ»[8]։ Վերլուծելով ճարտասանական դարձոյթները՝ բերում է հետաքրքրական օրինակներ, վիճակագրութիւններ։ Այսպէս՝ Գր. Նարեկացին «Մատեան ողբերգութեան» 30-ից աւելի գլուխներ սկսում է ճարտասանական դիմումով առ Աստուած։

Ճարտասանական երեք դարձոյթները ամփոփ ներկայացրել է նաեւ Լ. Եզեկեանը։ Նա կիրառում է ճարտասանական կոչ տերմինը։ Ըստ հեղինակի՝ ճարտասանական կոչերը հիմնականում պայմանաւորուած են հեղինակի կամ որեւէ անհատի տրամադրութեամբ եւ մեծ մասամբ վայրկենական տպաւորութեան կամ ոգեւորութեան արդիւնք են[9]։ Հարցի ուսումնասիրութեան մէջ նոր բան գրեթէ չի յաւելում։

Ժամանակակից լեզուաբանների կարծիքով, այս միջոցը կիրառելի է յատկապէս բանավիճային խօսքում, կամ երբ խօսողը լսարանի առջեւ քննարկում է վիճելի խնդիր, որը ակնյայտօրէն կարող է տարակուսանք ու նաեւ հարցումներ առաջացնել[10]։ Ճարտասանական դարձոյթների կիրառմամբ ակտիւանում է խօսքի ազդեցութիւնը՝ դառնալով աշխոյժ, բազմազան։

***Կրկնութիւն:** Մեր տպաւորութեամբ, հայ իրականութեան մէջ կրկնութեան առաջին յստակ սահմանումը տուել են Գ. Ջահուկեանը, Ֆ. Խլղաթեանը։ Նրանք գրում են. «Կրկնութիւնը այն բանադարձումն է, որի դէպքում միեւնոյն բառը, բառակապակցութիւնը կամ նախադասութիւնը աւում է երկու կամ աւելի անգամ՝ խօսքն աւելի արտա-*

---

[5] **Ֆ. Խլղաթեան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երեւան, 1976, էջ 67:

[6] **Պ. Պօղոսեան**, Խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ, գիրք երկրորդ, Երեւան, 1991, էջ 178:

[7] Նոյն տեղում էջ 179:

[8] Տե՛ս **Ա. Մարութեան**, Հայոց լեզուի ոճաբանութիւն, Երեւան, 2000, էջ 177:

[9] **Լ. Եզեկեան**, Ոճագիտութիւն, Երեւան, 2006, էջ 361:

[10] **Եու. Աւետիսեան**, **Ա. Սարգսեան** եւ ուրիշներ, Հայոց լեզու եւ խօսքի մշակոյթ, Երեւան, 2016, էջ 261:

յայտիչ դարձնելու, նրա յուզականութիւնն ուժեղացնելու նպատակով»[11]։ Հեղինակները կրկնութեան դրսեւորումներ են դիտարկում զուգահեռականութիւնը (շարահիւսական կառուցուածքի կրկնութիւն), խաչաձեւումը (կառուցուածքի շրջումը)։ Ֆ. Խլղաթեանը իր «Ոճաբանական տերմինների բառարանում» ընդգրկել է կրկնաբերութիւն տերմինը, ինչը հնչիւնների, բառերի, արտայայտութիւնների կրկնութեան վրայ հիմնուած բանադարձումների ընդհանրութիւնն է[12]։

Ըստ Էդ. Ջրբաշեանի, Հ. Մախչանեանի՝ կրկնութեան ամենատարածուած տեսակներն են՝ ա. հնչիւնային կրկնակները (յանգ, առձայնոյթ, բաղաձայնոյթ), բ. բառային կրկնակները (նոյնաբանութիւն, աստիճանաւորում, յարակրկնութիւն, վերջոյթ), գ. դարձուածքային կրկնակները (զուգահեռականութիւն)[13]։ Էդ. Ջրբաշեանը խորութեամբ ուսումնասիրել է յատկապէս բառական կրկնութիւնը, ինչը դիտարկում է որպէս խօսքի նշանակութեան ընդգծման շարահիւսական միջոց։ Ըստ նրա՝ յաճախ բառական կրկնութեան հանդիպում ենք չափածոյ ստեղծագործութիւններում։ Հետազօտողը մեկնաբանել է բառական կրկնութեան տեսակները՝ բերելով գործածութեան բնութագրական տարբեր օրինակներ գեղարուեստական գրականութիւնից։

Հայ ոճագիտական մտքի պատմութեան մէջ կրկնութեանը, տեսակներին, դրանց ոճական արժէքին հիմնաւոր անդրադարձ է կատարել Պ. Պօղոսեանը, որը, ուսումնասիրելով յաւելումով կազմուող ձեւերը, առանձնացրել է կրկնութիւնը, կրկնապատկերութիւնը, երկրորդումը, բաղհիւսումը, դարձը, համաստիճանութիւնը, շղթայակցումը, աստիճանը, առաւելումը, բազմաշաղկապութիւնը, բազմալծութիւնը, յապաղումը[14]։ Ոճագէտը ընդգծում է, որ կրկնութեան կարող են ենթարկուել ամենատարբեր միաւորները. իւրաքանչիւր միաւորի կրկնութիւն ունենում է իրեն յատուկ ոճական լիցքաւորում։

Յետագայ ուսումնասիրողները (Ա. Մարութեան, Ն. Վիրաբեան, Լ. Մարգարեան, Լ. Եզեկեան) հարցի ուսումնասիրութեան ոլորտում գրեթէ չեն յաւելում նոր բան։

Ժամանակակից հետազօտողները ամէնից յաճախ հանդիպող արտայայտչամիջոցներից են համարում լեզուական միաւորների ոճական կրկնութիւնները։ «Կրկնութիւնը սահմանւում է որպէս ոճական այնպիսի բանադարձում, որի էութիւնը որոշակի սահմանափակ համատեքստային միջակայքում լեզուական նշանների՝ բառերի, բառակապակցութիւնների, նոյնիսկ առանձին նախադասութիւնների կրկնութիւնն է՝ խօսքին յաւելեալ արտայայտչականութիւն հաղորդելու նպատակով»[15]։ Թ. Շահվերդեանը որպէս կրկնութեան տարատեսակներ է դիտարկում յարակրկնութիւնը (նոյնասկիզբ), կցուրդը, բազմաշաղկապութիւնը։ Հեղինակին յաջողուել է հիմնաւոր ներկայացնել կրկնութիւնը, նրա տեսակներն ու ոճական գործառոյթները։

Կրկնութեան մասին կարեւոր դիտարկումներ ունի Ա. Կարապետեանը։ «Կրկնութիւնը՝ որպէս հաղորդակցման գործընթացում բառիմաստի կամ հաղորդման իրավիճակային ինքնադրսեւորման արտայայտութիւն, ընդգրկում է խօսքը կամ ողջ շարա-

---

[11] **Գ. Ջահուկեան**, **Ֆ. Խլղաթեան**, Հայոց լեզու։ Ընդհանուր գիտելիքներ։ Ոճաբանութիւն, Երեւան, 1976, էջ 67-68։

[12] **Ֆ. Խլղաթեան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երեւան, 1976, էջ 49։

[13] **Էդ. Ջրբաշեան**, **Հ. Մախչանեան**, Գրականագիտական բառարան, Երեւան, 1980, էջ 165։

[14] **Պ. Պօղոսեան**, Խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ, գիրք երկրորդ, Երեւան, 1991, էջ 102։

[15] **Թ. Շահվերդեան**, Ոճագիտութիւն, Երեւան, 2010, էջ 198։

հիւսական համակարգը»[16]։ Նա շրջանառութեան մէջ է դրել կրկնութեան շարք տերմինը, ամենայն մանրամասնութեամբ ներկայացրել կրկնութիւնը յատկապէս շարահիւսական մակարդակում։ Հեղինակի մեծարժէք աշխատութիւնը ներդրում է հայագիտութեան մէջ։

Յ. Յովհաննիսեանը, ուսումնասիրելով պերճախօսական հնարները, առանձնացնում է կրկնութեան պարզ եւ բարդ, անընդհատ եւ մերթ ընդ մերթ (միջակայքային) ձեւերը[17]։

Նշենք, որ կրկնութիւնից պէտք է տարբերակել կրկնաբանութիւնը, ինչը մերժելի երեւոյթ է, տրամաբանական սխալ, ըստ էութեան, ոճական թերութիւն։

Հակադրութիւն: *Մեր ձեռքի տակ եղած աղբիւրների հիման վրայ կարելի է նշել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հարցի քննութեան առաջնեկը Գ. Վահանեանն է։ Նա գրում է. «Երկու առարկաների, երեւոյթների կամ պատկերների իրար հակադրելը արւում է խօսքի տպաւորութիւնը ուժեղացնելու նպատակով»[18]։ Այս արտայայտչական միջոցը կիրառւում է բանաստեղծական լեզուում, գեղարուեստական արձակում, հրապարակախօսութեան մէջ։*

Ըստ «Ոճաբանական տերմինների» բառարանի՝ հակադրութիւնը իմաստային տեսակէտից հակադիր բառերի կամ դարձուածքների զուգորդման վրայ հիմնուած բանադարձումն է[19]։ Գ. Ջահուկեանը, Ֆ. Խլղաթեանը հարցի ուսումնասիրութեան ոլորտում կատարել են կաղապարային վերլուծութիւններ, գրեթէ չեն յաւելել նոր բան։

Էդ. Ջրբաշեանը հակադրութեան տեսակներից է համարում կատախրեզն ու օքսիմորոնը, «երբ տարբեր կամ նոյնիսկ սուր կերպով հակադիր իմաստ ունեցող բառերը ոչ միայն դրւում են կողք կողքի, այլեւ կազմում են մի ամբողջական լեզուական միաւոր (որոշիչ եւ որոշեալ, ենթակայ եւ ստորոգեալ, նախադասութեան համազօր անդամներ եւ այլն)»[20]։ Հեղինակը բերում է բառական հակադրութեան օրինակներ գեղարուեստական գրականութիւնից, նշում, որ բառական հակադրութիւնը հայ պոեզիայում յաջողութեամբ կիրառել է յատկապէս միջնադարեան հայ բանաստեղծ Ֆրիկը։

Հետաքրքիր հարցադրումներով ուշագրաւ է Պ. Պօղոսեանի ուսումնասիրութիւնը։ Նա քննել է ներհակութեամբ կազմուող ձեւերը՝ հակադրութիւն, հակադարձում, բաժանում, շրջում, խաչակերպ, անտրամաբանականութիւն, երկդիմութիւն, երկսայրաբանութիւն, իմաստականութիւն։ Հակադրութիւնը որակում է որպէս ոճական «ուժեղ» արտայայտչամիջոց, ներկայացնում դրա ձեւաւորման չորս եղանակ՝ ա. առարկան հակադրւում է հակադրական յատկանիշներով բնութագրւող մի այլ առարկայի, բ. իմաստով ներհակ, հակադիր գաղափարները բնութագրւում են նոյն յատկանիշով, գ. միեւնոյն առարկան ստանում է հակադրական բնութագրութիւններ, դ. հակադրութիւնը ոչ թէ գաղափարների մէջ է, այլ բառերի, եւ կամ գաղափարների միջեւ դրուած հակադրութիւնը ձեւական է, բովանդակութեան հետ չկապուած[21]։

Հակադրութեան մասին ոճաբանական վերլուծութիւնները շարունակեցին Ա. Մա-

---

[16] **Ա. Կարապետեան**, Կրկնութիւնը եւ զեղչումը ժամանակակից հայերէնում, Երեւան, 2016, էջ 210:

[17] Առաւել մանրամասն տե՛ս **Յ. Յովհաննիսեան**, Բանավէճի տեսութիւն եւ արուեստ, Երեւան, 2019, էջ 188-189:

[18] **Գ. Վահանեան**, Հայոց լեզուի ոճաբանութեան ձեռնարկ, Երեւան, 1956, էջ 95:

[19] **Ֆ. Խլղաթեան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երեւան, 1976, էջ 50:

[20] **Էդ. Ջրբաշեան**, Գրականութեան տեսութիւն, Երեւան, 1972, էջ 267:

[21] Առաւել մանրամասն տե՛ս **Պ. Պօղոսեան**, Խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ, գիրք երկրորդ,

րութեանը, Լ. Եզեկեանը, Ն. Վիրաբեանը, Լ. Մարգարեանը, որոնց ներկայացրած նիւթը մեծամասամբ նախորդների կարծիքների կրկնութիւնն է։

Ոճական հակադրութիւնների մասին կարեւոր դիտարկումներ ունի Թ. Շահուերդեանը։ Լեզուաբանը փաստում է, որ ոճական այս հնարանքի կիրառման ասպարէզում հայերէնն ունի բազում քերականական միջոցներ։ Նա ուսումնասիրել է հետեւեալ ներհակական կապակցութիւնները՝ հակադրութեան, ժխտման, տրոհական, պայմանաներհակական, զիջական[22]։ Հեղինակի ուսումնասիրութիւնը պարունակում է զգալի նորութիւններ։

Ժամանակակից հետազօտողները նշում են, որ հակադրութիւնը ձեւաւորւում է հականիշների բոլոր տեսակներով, առանձնացնում են լեզուական, խօսքային կամ համատեքստային հականիշներով հակադրութիւններ, բառի բազմիմաստութեան հիմքով ստեղծուած հակադրութիւն եւ շարահիւսական հակադրութիւն[23]։

Աստիճանաւորում։ Ըստ մեր ունեցած նիւթերի՝ հարցի տեսական հիմունքները սկսել է ներկայացնել Գ. Վահանեանը, որը տալիս է աստիճանաւորում (գրադացիա) տերմինը։ Ըստ նրա՝ այն տարածում ունի բոլոր ոճերում։ Գ. Ջահուկեանը, Ֆ. Խլղաթեանը աստիճանաւորումը սահմանում են հետեւեալ կերպ. «Աստիճանաւորումը այն բանադարձումն է, որի դէպքում իրար են յաջորդում իմաստով մերձաւոր բառեր՝ իմաստի աստիճանական ուժեղացմամբ»[24]։ Ֆ. Խլղաթեանը տարբերակել է բարձրացող եւ իջնող աստիճանաւորումը։ Լեզուաբանները, ըստ էութեան, ներկայացրել են զուտ լեզուական մակարդակի նկարագրութիւն։

Էդ. Ջրբաշեանը յաւելում է, որ բանաստեղծական երկերում պատահում են հատուածներ, որոնց մէջ իմաստն աստիճանաբար ուժեղանում է՝ համապատասխան լեզուամիջոցների ընտրութեան եւ դասաւորութեան շնորհիւ[25]։ Հեղինակը վերլուծել է աստիճանական ուժեղացման, թուլացման օրինակներ գեղարուեստական գրականութիւնից։

Յետագայ ուսումնասիրութիւններում աստիճանաւորումը բնութագրւում է որպէս արտայայտչական հիմնական միջոց։ Այն խօսքին հաղորդում է իմաստային շեշտուածութիւն, ուժեղացնում է յուզականութիւնը, արտայայտչականութիւնը։ Լեզուաբանները դիտարկում են աստիճանաւորման օգտագործումը թէ՛ արձակ, թէ՛ չափածոյ խօսքում։

Յ. Յովհաննիսեանը աստիճանաւորումը ուսումնասիրել է որպէս պերճախօսական հնար։ Նա առանձնացրել է աստիճանաւորման աճող եւ նուազող եղանակները[26]։

Ա. Գալստեանի կարծիքով, շարահիւսական այս կառոյցը հիմնականում յատուկ է չափածոյ խօսքին, սակայն համապատասխան լեզուամիջոցների ընտրութեան եւ դասաւորութեան շնորհիւ ըստ էութեան արտայայտւում է նաեւ յուշագրական արձակում[27]։

Երեւան, 1991, էջ 165-169։

[22] Առաւել մանրամասն տե՛ս **Թ. Շահուերդեան**, Ոճագիտութիւն, Երեւան, 2010, էջ 212-217։

[23] Առաւել մանրամասն տե՛ս **Եու. Աւետիսեան**, **Ա. Սարգսեան**, **Ն. Ներսիսեան** եւ ուրիշներ, Հայոց լեզու եւ խօսքի մշակոյթ, Երեւան, 2016, էջ 235-236։

[24] **Գ. Ջահուկեան**, **Ֆ. Խլղաթեան**, Հայոց լեզու։ Ընդհանուր գիտելիքներ։ Ոճաբանութիւն, Երեւան, 1976, էջ 72։

[25] **Էդ. Ջրբաշեան**, Գրականութեան տեսութիւն, Երեւան, 1972, էջ 268։

[26] **Յ. Յովհաննիսեան**, Բանավէճի տեսութիւն եւ արուեստ, Երեւան, 2019, էջ 193։

[27] **Ա. Գալստեան**, Արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան լեզուն, գիրք Բ, Երեւան, 2021, էջ 157։

Ժամանակակից լեզուաբանները կարեւորում են աստիճանաւորման կառուցումը. այն ստեղծում է քերականօրէն, տրամաբանական համասեռ շարքերի, թուարկումների միջոցով։ Աստիճանաւորման փլուզումը անխուսափելի է, եթէ առկայ է հոմանիշների ոչ ճիշտ դասաւորութիւն, իմաստային նրբերանգների շփոթ եւ այլն։

Այսպիսով, արտայայտչական համակարգի միջոցները լայն գործածութիւն ունեն, եւ մարդիկ աշխատում են օգտուել դրանցից՝ խօսքը արտայայտիչ, ինչպէս նաեւ ներգործուն դարձնելու նպատակով։ Խօսքի արտայայտչական միջոցները դրսեւորւում են լեզուի բոլոր մակարդակներում։ Դրանց վերաբերեալ ուսումնասիրութիւնները շարունակւում են ցայսօր։ Որպէս վերջին աղբիւր ծառայում է ԵՊՀ Հայոց լեզուի ամբիոնի կողմից հրատարակուած «Հայոց լեզու եւ խօսքի մշակոյթ» գիրքը, որում ներկայացուած են արտայայտչական գրեթէ բոլոր միջոցները՝ թարմ օրինակներով։

ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրութեան ֆակուլտետի դասախօս